№ 142 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13

1888

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13 № 142

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
Իրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“
ВЪ 1889 ГОДУ
(ШЕСТОЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по нынѣшней программѣ газеты литературной, общественной и политической.

Условія подписки, съ пересылкою и тоставкою: на годъ 10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяцъ—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р. 50 к., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа любого мѣсяца).

Объявленія: на 4-й страницѣ газеты по расчету 8 к. за строку петита или за занимаемое ею мѣсто. На первой страницѣ—15 к. за такую-же строку.

Подписка и объявленія принимаются: ВЪ ТИФЛИСѢ—въ конторѣ изданія, Головинскій просп., домъ Читахова, № 12.

а) ВЪ ОТДѢЛЕНІЯХЪ КОНТОРЫ:

б) ВЪ БАКУ—при аптекарскомъ магазинѣ И. Г. Чубинова, на Михайловской улицѣ домъ Мирза-Авакова и Карабегова.

2) ВЪ КУТАИСѢ—при книжномъ магазинѣ братьевъ Чиладзе, противъ бульвара, въ домѣ Г. Андроникова.

3) ВЪ БАТУМѢ—при конторѣ М. С. Бетанова, Набережная, домъ Ферадъ-Бега.

в) У АГЕНТОВЪ КОНТОРЫ:

1) ВЪ Г. ШУШѢ—С. О. Ананьева, на площади Топханэ.

2) ВЪ Г. ГОРИ—Ир. И. Рамишвили.

Въ отдѣленіяхъ и у агентовъ подписка и объявленія принимаются по редакціоннымъ цѣнамъ, безъ всякой надбавки. Розничная продажа тоже производится безъ увеличенія платы, по 5 коп. за номеръ.

Иногородніе адресуютъ свои требованія: Въ Тифлисъ, въ редакцію «Новаго Обозрѣнія».

Редакторъ М. А. Успенскій.
Издательница О. А. Николадзе.
3—4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրական պարագիտներ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քանի մի խօսք Թուրքերի կրթութեան մասին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բժշկի զրոյցները.

ԳՐԱԿԱՆ ՊԱՐԱԳԻՏՆԵՐ

I.

Ընթերցո՛ղ, գիտէ՞ք ինչ բան է **պարագիտ** (օտարակեր)։

Պարագիտ անուանում են բնագիտութեան մէջ այն տեսակ բոյսերին և սունկերին, որոնք չը կարողանալով ինքնուրոյն, անկախ կերպով ապրել, պինդ կպչում են ուրիշ բոյսերին, ծառերի բունին և ապրում են ուրիշ բոյսի հիւթը ծծելով։ Պարագիտ անուանում են նմանապէս այնպիսի փոքրիկ կենդանիներին, որոնք կպչելով ուրիշ կենդանու մարմնին, կամ ծառի բունին, կարողանում են շարունակել իրանց գոյութիւնը միմիայն ուրիշի հիւթը ծծելով։ Առանց ուրիշ բոյսին կամ կենդանուն կպչելու, առանց ուրիշի հիւթով ապրելու՝ բոյս թէ կենդանի պարագիտը անկարող է մի բոպէ անգամ շարունակել իր օտարակեր գոյութիւնը։

Բնութեան մէջ գոյութիւն ունեցող այդ երևոյթի նմանողութեամբ կարելի է ասել որ մարդկային հասարակութեան այլ և այլ գործողութիւնների մէջ դիտելի է օտարակերութիւնը, պարագիտիզմը։

Պարագիտիզմի տերմինը բացատրելուց յետոյ, անցնենք ուղղակի այն խնդրին, որը և կազմում է մեր այս յօդուածի նը-պատակը։

Այն օրից, յունվարի 1-ից 1872 թ-ի, երբ „Մշակը“ հիմնվեց, ամբողջ մնացած հայոց մամուլը մեր մտաւոր կեանքի մէջ ուրիշ ոչինչ չէր ներկայացնում, եթէ ոչ զրական պարագիտիզմը։

Երբ „Մշակը“ սկսեց հրատարակվել, ռուսահայերի ամբողջ հայոց մամուլը արդէն վերջացրել էր իր գոյութիւնը։ Յունվարի 1-ին, 1872 թ-ի այլ ևս ոչ մի լրագիր կամ ամսագիր հայերէն լեզուով չէր հրատարակվում ամբողջ Ռուսաստանում, բացի „Արարատ“ ամսագրից, որը, ինչպէս միշտ, շարունակում էր իր անդոյն, աննպատակ, ապարդիւն, ամենքից մոռացված՝ աննկատելի գոյութիւնը։ Վերջին հրատարակութիւնները՝ „Հայկական Աշխարհը“ վաղուց դադարած էր արդէն, իսկ „Սեղուս Հայաստանի“ լրագրի վերջին համարը, կէս թերթի մեծութեամբ, հրատարակվեց դեկտեմբեր ամսին 1871 թ-ին։

Երեք թէ չորս ամիս „Մշակի“ երևալուց յետոյ կազմակերպվեց յանկարծ մի նոր խմբագրութիւն բարձրագոյն ուսում ստացած հայ երիտասարդներից, որոնք յանձն առան, Սիմէօնեանցի խմբագրութեամբ, նորոգված „Սեղուն“ հրատարակել։ Այն կեղծ-ինտելիգենտ մարդիկ, որոնք մինչև „Մշակի“ երևալը ոչ թէ միայն երբէք գրիչ չէին վերցնում Պետրոս Սիմէօնեանցին օգնելու և միակ հայոց օրգանի մէջ գտնէ շաբաթը մի անգամ որ և է օգտաւէտ միտք յայտնելու, բայց և ուղղակի հերքում էին հայոց լեզուով գրելու, հայերէն թերթ հրատարակելու կարևորութիւնը ու մինչև անգամ հնարաւորութիւնը,—նոյն մարդիկ յանկարծ գրիչ են վերցնում, ահագին քանակութեամբ թանաք ու մուր են սկսում գործածել, ահագին քանակութեամբ նիւթ են գտնում գրելու, մտքեր յայտնելու համար....

Ո՞րտեղից էր յանկարծ յայտնվել անտարբեր, քնած մարդկանց մէջ այդ անսովոր եռանդը, ո՞րտեղից էր յայտնվել նիւթի այն առատ քանակութիւնը, որը համալսարանական անտարբեր, քնած, մեռած, ապուշ երիտասարդութիւնը յանկարծ գտել էր....

Այդ նիւթը „Մշակն“ էր մատակարարում նրանց, նրան էր կպել ինքնուրոյն մտածողութեան և ստեղծագործութեան ընդունակութիւնից զուրկ, ուժասպառ, չորացած ուղեղով, համալսարանական երիտասարդութիւնը, ինչպէս պարազիտները կպչում են ծառի բունին, և ահա սկսվեց գրական օտարակերութիւնը, գրական պարագիտիզմը, սկսվեց գրական ասպարէզի վրա օտար հիւթով ապրելու տեսարանը, որը և շարունակվեց մի տասնեակ տարի։ Ամեն բան „Սեղուի“ արտաքին ձևերի մէջ „Մշակի“ նմանողութիւն էր, մի տեսակ Abklatsch էր (արտատիպ). ձևը, գիրքը, բովանդակութիւնը, պայմանները, յօդուածների դասաւորութիւնը, առաջնորդողներ գրելու կապակութիւնը և համար կազմելու ձևը.... մի խօսքով „Սեղուն“՝ „Մշակի“ ստուերն էր։ Իսկ մտքերը սկզբից մինչև վերջը ուրիշ բան չէին, եթէ ոչ „Մշակի“ իւրաքանչիւր յօդուածին, իւրաքանչիւր տողին, իւրաքանչիւր բառին, իւրաքանչիւր տառին,—անվերջանալի պատասխաններ։ „Սեղուն“ մի տասնեակ տարի գոյութիւն ունէր միմիայն այն պատճառով, որ կարողացաւ „Մշակի“ պատասխանը գտնալ։ Եթէ „Մշակը“ չը լինէր, ու մտքեր չը յայտնէր, „Սեղուն“ ու նրա խմբագրութիւնը կազմող համալսարանական թարմ ոյժերը չէին իմանայ թէ ի՞նչ պէտք է գրէին։ Տասն տարուց աւելի „Սեղուն“ ապրում էր „Մշակի“ նիւթերով, ապրում էր, ինչպէս մի ուղղամիտ պարագիտ, „Մշակի“ հիւթով։ Վերջը ինքն իր ենէյնիմներից յոգնեց, ուժասպառ եղաւ և ընկաւ։

„Մշակի“ երևալուց մի չորս տարուց յետոյ, սկսեց լոյս տեսնել „Փորձ“ հատոր-փոր և բազմաբովանդակ ամսագիրը։ Սա փորձեց ապացուցանել որ եւրոպական ուսում ստացած խմբագրի ձեռքում հայոց օրգանը կարող է լինել անկախ, կարող է ինքնուրոյն գոյութիւն ունենալ, առանց „Մշակի“ պարագիտը լինելու, առանց „Մշակի“ հիւթով ապրելու,—բայց չարաչար սխալվեց իր հաշիւների մէջ։ Նա դիմացաւ միայն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԸ

—

Ծաղկահատութեան համար կովի երեք տեսակ աւիշ է գործ դրվում, այն է,

1) Մարդաւիշ ասվում է այն նիւթը, որը ստացվում է մարդու բշտիկների բաղադրութիւնից, կովի ծաղիկ պատուաստելուց յետոյ։ Ահա այդ տեսակ աւիշը վերցնելով մի երեխայից պատուաստում են միւս երեխաներին։ Ի հարկէ մի բշտիկի բովանդակութեամբ կարելի է շատերին պատուաստել։ Որովհետև հարկաւոր ժամանակ միշտ թարմ աւիշ ունենալ դժուար է, այդ պատճառով ծաղկահատները պահում են երեխայի բշտիկներից վերցրած աւիշը առանձին նպատակայարմար ապակեայ փոքրիկ խողովակների մէջ։ Թէ ձեռքից ձեռք պատուաստման և թէ արհեստական կերպով աւիշը պահպանելու համար, անհրաժեշտ է առողջ ծնողներ ունեցող առողջ երեխաների բշտիկների նիւթը վերցնել։ Թէ թոքախտով և թէ սիֆիլիսով կամ զօլոտուխայով վարակված ընտանիքների երեխաների բշտիկների նիւթը ոչ թէ միայն պատուաստելու համար չը պէտք է գործածել, այլ մինչև անգամ նա ուղղակի վնասակար է։ Բացի այդ ինքն երեխան, որից նիւթ ենք վերցնում պատուաստելու համար, պիտի՝ ֆիզիկապէս լաւ զարգացած լինի և բոլորովին առողջ։ Մի և նոյն ժամանակ անհրաժեշտ է պատուաստել և այն երեխայի բշտիկի նիւթով, որին առաջին անգամն է ծաղիկը պատուաստած. կրկնապատուաստվածների բշտիկների նիւթը այնքան ոյժ չէ ունենում, թոյլ է պատուաստվում, և նրա նախապաշտպանողական ոյժը կասկածելի է։ Պատուաստման ինն երորդ օրը աւելի յարմար ժամանակ է պատուաստված երեխայի բշտիկի աւիշից ձեռքից ձեռք միւսներին պատուաստել։ Մարդաւիշով պատուաստման մասին մի քանի ընդդիմախօսութիւններ եղան բժիշկների կողմից։ Ոմանք ասում էին թէ ծաղկահատութիւնը այդ ձևով սիֆիլիս և այլ հիւանդութիւններ կարող է տարածել, բայց պատուաստված աւիշ ունեցող երեխայի խիստ բժշկական քննութիւնը կարող է այդպիսի հիւանդութիւնների առաջն առնել։ Միւսները ասում էին թէ ձեռքից ձեռք պատուաստած ծաղկի աւիշի ոյժը թուլանում է և թէ բոլորովին անհետանում, բայց փորձերը դոնէ դեռ հաստատած չեն այդ կարծիքը։

2) Խոկական կովի ծաղկի աւիշով պատուաստելն ևս իր անյարմարութիւններն ունի. առաջին որ կովերի մէջ ծաղիկ հիւանդութիւնը այնքան շատ չէ պատահում և ամեն ժամանակ կովի ծաղկի աւիշ գտնելը դժուար է։ Մի և նոյն ժամանակ պիտի ասել, որ կովի ծաղկի աւիշով ծաղկահատութիւնը երբեմն բարդ երևոյթների պատճառ է լինում. ամբողջ ձեռքը ուռչում է, կաշին կարմիր քամուճան կարմրում է, պատուաստածի տաքութիւնը բաւականաչափ բարձրանում է։ Այստեղ ևս ուշադրութիւն պիտի դարձնել կենդանու առողջութեան վրա, որ շատ հեշտ կարելի է իմանալ, մարթելով կենդանուն և քննելով նրա բոլոր գործարանները։

3) Ռետրովակցինի՝ ասվում է ծաղկահատութեան այն եղանակը, երբ հորթի ծծերի վրա կովի ծաղիկ պատուաստելուց յետոյ առաջացած բշտիկների աւիշը գործ է դրվում երեխաներին։ Այստեղ ևս պիտի ուշադրութիւն դարձնել հորթի առողջութեան վրա, մարթելով հորթը և քննելով նրա բոլոր մասերը։

Այժմ ինչպէս Եւրոպայի, նոյնպէս և Ռուսաստանի շատ քաղաքներում պատուաստարաններ են բացված, ուր այդ եղանակով ժամանակ առ ժամանակ պատուաստելու աւիշ են պատրաստում, և հարկաւոր դէպքում բաժանում են ծաղկահատներին և մասնաւոր բժիշկներին. Թիֆլիսում ևս կայ յատուկ պատուաստարան բժշկապետ Բախտուռովի տեսչութեան ներքոյ, որտեղ ծաղիկը ձրի են պատուաստում, երեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը, առաւօտեան 9—11 ժամը։

—

Մենք արդէն պատմեցինք ծաղկահատութեան համար գործ դրված երեք տեսակ աւիշի մասին, մենք տեսանք իւրաքանչիւրի առաւելութիւնը և պակասութիւնը, այժմ դառնանք պատուաստված ծաղկի պատկերին։

Պատուաստումից յետո առաջին օրը՝ պատուաստված տեղերը փոքր ինչ ուռչում և թեթև կարմրում են. այս երևոյթները շատով անհետանում են։ Երկու կամ երեք օրից յետո ուռոյցները նորից երևալով՝ փոքրիկ բլրակի ձև են ստանում։ Հինգերորդ կամ վեցերորդ օրը բլրակները բշտիկների են փոխվում, մէջ տեղը փոքր ինչ փոս, ինչպէս և յատուկ է բնական ծաղկի բշտիկներին։ Բշտիկների բոլորի շուրջ կայծն աւելի կարմրելով թեթև կապտագոյն գոյն է ստանում։ Հետևեալ օրերը բշտիկը հետզհետէ մեծանում է և հասնում է սիսեռահատի մեծութեան. այդ միջոցին երբեմն թեթև ջերմ ևս կարող է պատահել։ Ինն երորդ կամ տասներորդ օրը բշտիկների մինչև այդ ժամանակ պարզ բովանդակութիւնը պղտորվում է թարախանալու պատճառով, բորբոքման երևոյթները սաստկանում են, երբեմն կրան տակի աւիշեան գեղձերը ուռչում են։ Հետզհետէ այս բոլոր երևոյթները թուլանում են, թարախով լի բշտիկները չորանում են և թեփոտվում, քսանևերորդ կամ երեսներորդ օրը թեփերը թափվում են, իսկ պատուաստված տեղերը կլոր կամ ճառագայթաձև կարերի են փոխվում, որոնք առաջ վարդագոյն լինելով հետզհետէ սպիտակ գոյն են ստանում։

Պատուաստման օրից մինչև բշտիկների թեփվելը, երեխան պիտի կանոնաւոր հոգատարութիւն ունենայ։ Առաջին օրերը, մինչև բլրակի երևալը, երեխային լողացնել դեռ կարելի է, նրանից յետոյ

յրոկ դուռ Ֆիլադելֆիոն ուժան Եվդոկի Ժ
-գնգտ քաղաքատու մս Ղեկտաու և Նամակ
Ղեկրվն դվիհրգ դվց
-սշվր Հեռ և տնգրամեդ, բրանցնան ի և բրար
-վոշ դուվգվդ, դգ բրանիմանամ Ամդչնդն դուգնվտ
քաղիդան տար, Ս բրանհրաս Ամիմն, Ս բրամրամ դվ
-տակ Ամշուհ վնդիմն քաղիտատաու դրդամ
Ղեկտաուտաու Եվն
-սդ վանվո բատր Եվեռ դուտա բրակ դվեոգ բրաժնոն
ոնա Ֆիատաջատաու դարտատաու տակ բրադդ
և ձդաղանդա Ամդվրիտատկինաք Նամամ։ Ամդ
-տարաք դարտատաուտանդվիմ Ղեկտաուտաու և Նամակ
վիդրա մս, դվիհրաք և կանդանվնդա դուվգվդ դձդվ
Եվվ, բրանինաշտ հն Ամդվրիտատկինաք Նամամվ
։հն քաղիտատաքվ—քաղանանու դանդ Ամբրվդ վիվանշ
ամդ Ֆիատա Եվեռ Նամդրիս դրդամ բրանիմնվ
և Եվիվանշ վինաք հատ քաղատ Ամ մնվրա բրակ դ
բրանիդատու և տակ մնվրա դարտատաուտ Եվվ
բրադդ և Նամամ Ամդվրիտատկինաք։
Ամրատ ղանդանդանդ
Ամդանվն Ֆիատաղանդ ատակ և Նամակ
-ղեկտ քաղիտատաու մս Ղեկտաուտաու և Նամակ
։Ղեկրվն դվիհրգ դվց
-սշվր Հեռ և տնգրամեդ, բրանդանան դ և բրար
-վոշ դուվգվդ, դգ բրանիմանամ Ամդչնդն դուգնվտ
քաղիդան տար, Ս բրանհրաս Ամիմն, Ս բրամրամ դվ
-տակ Ամշուհ վնդիմն քաղիտատաու դրդամ
Ղեկտաուտաու Եվն
-սդ վանվո բատր Եվեռ դուտա բրակ դվեոգ բրաժնոն
ոնա Ֆիատաջատաու տակ բրադդ
և ձդաղանդա Ամդվրիտատկինաք Նամամ։ Ամդ
-տարաք դարտատաուտանդվիմ Ղեկտաուտաու և Նամակ
։

գովելի և լաւ է։ Բայց, ինչպէս պնդում են գործին ծանօթ անձինք, այդ Դարախանա կոչված տեղում քարափի ճեղքերից բղխում են տաք ջրեր, որոնցից և օգուտ էին քաղում աղքատ լուացարար կանայք. այդ տաք ջրերը կապել են բաղնիսների տէրերը, և թոյլ չեն տալիս դրանցից ուրիշներին օգտվելու։ Նախ հարկաւոր է քննել թէ արդեօք այդ ճեղքերից բղխող տաք ջրերը առողջարար են բաղնիսների համար, և երկրորդ՝ քանի որ այդ ջրերը բաղնիսներից դուրս են, ուրեմն բաղնիսպանները իրաւունք ունեն նրանց տիրելու, և այդպիսով զրկելու բազմաթիւ աղքատ կանանց օրական մի քանի կօպէկ աշխատելուց և իրանց ապրուստը հայթայթելուց։›

—

ՏՈՒԼԱՑԻՑ մեզ գրում են։ ‹Նոյեմբերի սկզբներին Տուլայում վախճանվեց երևանցի երիտասարդ Միքայէլ Տէր-Աւէտիքեան, որը այնտեղ ուսումնասիրում էր զինագործութիւնը։ Նա Էջմիածնի ճեմարանի աշակերտ էր. դուրս գալով ճեմարանի երկրորդ լսարանից, նա վճռեց ուսումնասիրել արհեստի մի ճիւղը, և այդ նպատակով եկաւ Տուլա,—սակայն շնորհալի արհեստագէտը իր նպատակին չը հասաւ և մեռաւ 25 տարեկան երիտասարդ հասակում։›

—

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են հետևեալը։ ‹Մեր ուսումնարաններում աշակերտներին ծեծելը մի տեսակ սովորութիւն է դարձել։ Անցեալ օրերը աշակերտների ծնողներից մի քանիսը բողոքել են դպրոցի հոգաբարձուներին, որ ուսուցիչներից մէկը անողորմաբար ծեծել է իրանց որդկերանց. օրինակ՝ աշակերտներից մէկի ականջը քաշելուց արիւն էր հոսել. դա փաստ է, որ մենք ներկայ եղողներս տեսանք։ Միւս ուսուցիչները լուռ կերպով են բողոքում ծեծող ուսուցչի դէմ։ Սակայն հոգաբարձուները մինչև այսօր ոչ մի վճիռ չեն կայացրել և անուշադրութեան են թողել այդ իրաւացի բողոքը։ Դա ինչ կը նշանակէ։›

—

ԴԶՐԼ-ԱՐՎԱՏԻՑ մեզ գրում են։ ‹Այստեղի վաճառականների մէջ երբեմն-երբեմն մի անհամակրելի երևոյթ է տեղի ունենում։ Վաճառականները զանազան տեղերից բերել են տալիս ծառաներ, դուքանի օգնականներ, հասարակ գործակատարներ, որոնք ով գիտէ ինչ յոյսերով յանձն են առնում գալ այս հեռու երկիրը։ Սակայն այդ խեղճերը շատ անգամ խաբվում են. վաճառական-աղան տարիներով պահելով այդպիսիներին, շատ անգամ վերջում զանազան անտեղի պատճառներ բերելով՝ արտաքսում է նրանց, առանց մի կօպէկ անգամ տալու։ Դա վերին աստիճանի զզուելի անխղճութիւն է, որից պէտք է ձեռք վերցնի փոքր ի շատէ խիղճ ունեցող վաճառականը։›

—

Զանգեզուր գաւառի ԵՐԻՑՎԱՆԻԿ աւանից մեզ գրում են։ ‹Վերջին ժամանակներս Մեղրիի բաժնի հաշտարար դատաւորը իր բնակութիւնը հաստատել է գլխաւորապէս Գօրիսում։ Գօրիս գընալու համար Մեղրիի բաժնի զանազան կողմերի գիւղացիները շատ անգամ 200 վերստ պէտք է անցնեն. բայց այդ ոչինչ բան կը լինէր, եթէ ճանապարհները ազատ լինէին աւազակներից և գողերից։ Տարաբաղդաբար աւազակութիւնները շատացել են և այն կողմի գլխաւոր ճանապարհների վրա անգամ սպանութիւնները անդադար կրկնվում են. իսկ գողութիւնները սովորական կերպարանք են ստացել։›

—

Դժբաղդ Մանիի ինքնասպանութեան և նրա համար արտայայտված հասարակական ցոյցերի առիթով շատ տեղերից մենք ստացանք նամակներ և տեղեկութիւններ, որոնք բոլորն էլ այն միտքն են յայտնում, որ Մանիի նման զոհեր հարիւրներով և հազարներով կան՝ սկսած մեծ քաղաքներից մինչև յետընկած գիւղերը, և դրանք բոլորն էլ ճնշվում են զանազան հարուստների ճանկերի մէջ։ Տարբերութիւնը նրա մէջն է,—ասում են զանազան սրտաճմլիկ դէպքեր նկարագրող նամակագիրները, որ Մանի ինքնասպանութեան դիմելով, արիւնով բողոքեց հարստահարութեան դէմ, իսկ միւսները լուռ և գլուխը քաշ գցած կրում են իրանց գլխի վրա թափվող հարուածները։ Մենք շատ լաւ գիտենք, որ այդ բոլորը տխուր իրականութիւն է, և կը լինի, քանի որ հազար ու մի անիրաւ ճանապարհներով հարստացած տգրուկները դեռ ևս անպատիժ կերպով ծծում են իրանց ցանցի մէջ ընկած դըժբաղդների արիւնը....

—

Թիֆլիսի նահանգական վարչութեան բժշկական բաժնի հրատարակած տեղեկութիւններից երևում է, որ ներկայ թւականի նոյեմբեր ամսվայ ընթացքում Թիֆլիսում մեռել են 273 մարդ, որոնցից 140 տղամարդ, իսկ 133 կին։ Համեմատելով նոյեմբեր ամսվայ ընթացքում տարափոխիկ հիւանդութիւններից մեռածների թիւը հոկտեմբեր ամսվայ ընթացքում մեռածների հետ, երևում է որ ծաղկից մեռնողների թիւը նոյեմբերին աւելի քիչ է եղել, քան հոկտեմբերին, իսկ դրա հակառակ սկարլատինա կոչված հիւանդութիւնը նոյեմբերին աւելի տարածված է եղել։ Ամենից շատ ծաղիկ հիւանդութիւնից մեռնողներ եղել են Հալաբար կոչված թաղում։

—

Մանիի գործում յայտնի Պլիուշչևսկի, որը դուրս գցվեց Թիֆլիսի ժողովարանի անդամների թւից, ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագիրները, գանգատվել է ժողովարանի վճռի դէմ նահանգական կառավարութեանը։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են, որ այդտեղի հայոց ուսումնարանը շատ վատ է գնում և ուսուցիչները ուշադրութիւն չեն դարձնում աշակերտների կանոնաւոր ուսման վրա։ Ցանկալի կը լինէր, ասում է թղթակիցը, որ հոգաբարձութիւնն էլ աւելի համերաշխ լինէր և աւելի եռանդ ցոյց տար դէպի ուսումնարանական գործը։

—

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են։ ‹Այս օրերս Աւագեան եղբայրների տանը, երեխայի մկրտութեան ժամանակ, Նորեկ հայ քահանան (այժմ Ասխաբադում երկու հայ քահանայ կայ), դարձաւ դէպի հիւրերը և կարճ կերպով բացատրելով ուսումնարանի անհրաժեշտութիւնը, աւելացրեց որ այսուհետև ամեն մի մկրտութեան ժամանակ խաչահամբոյրից հաւաքված փողերը քահանաները ամենայն ուրախութեամբ յատկացնելու են նոր բացվելի ուսումնարանին։ Ապա քահանան առաջարկեց ներկայ զտնվողներին իրանց կարողութեան չափ նիւթապէս նպաստել ուսումնարանի իրագործման գործին։ Մի քանի բոպէում հաւաքվեց 50 ռուբլի և հանգանակութիւնը դեռ պիտի շարունակվի։ Այսպիսով հիմք դրվեց հայ ծխական ուսումնարանի գոյութեանը Ասխաբադում և այժմ կարելի է յուսալ, որ յիսունի չափ հայ մանուկներ, որոնք անգործ թափառում են Ասխաբադի փողոցներում, գոնէ տարրական կրթութիւն կը ստանան։›

—

ՕԴԷՍԱՑԻՑ մեզ գրում են, նոյեմբերի 30-ից, հետևեալը։ ‹Եղանակը բաւական ցրտել է նոյեմբերի վերջին օրերից սկսած. ձիւնը թէև դեռ չէ նստած, բայց շատ սառն քամի է փչում։ Այստեղ հացի առատութիւն է. առաջին տեսակի ալիւրի պուդը արժէ 95 կօպէկից մինչև 1 ռուբլի 20 կօպէկ։›

—

Նոյեմբերի 28-ին, ինչպէս մեզ գրում են ՕԴԷՍԱՑԻՑ, պ. Ադամօվսկի մի կօնցէրտ տուեց Օդէսայի դաշլիճներից մինում և զիջանելով հայ ուսանողների խնդիրքին, յատկացրեց իր կօնցէրտից գոյացած զուտ արդիւնքի կէսը յօդուտ համալսարանի հայ չքաւոր ուսանողների։ Թղթակիցը լսել է որ բացի սրանից Օդէսայի ուսանողները դիտաւորութիւն ունեն շուտով մի ներկայացում տալ հայերէն լեզուով։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են դեկտեմբերի 5-ից հետևեալը։ ‹Այսօր քաղաքումս ֆոտոգէնը վաճառվում է ֆունտը 10 կօպէկով, մինչդեռ արտասահմանում մեր ֆոտոգէնը կրկնապատիկ էժան է ծախվում։ Հասարակութիւնը յուզված է այդպիսի տարօրինակ երևոյթի պատճառով։ Եւ չը պէտք է մոռանալ, որ հաղորդակցութիւնը Բաղուից մինչև այստեղ ամենայն դիւրութիւններ է ներկայացնում ֆոտոգէնը հասցնելու համար. Բաղուն երկաթուղիով կապված է Միխայլովի հետ, իսկ այդտեղից բեռնակիր ֆուրգոնները երկու օրվայ մէջ հասցնում են մեզ տպրանքը, պուդը 10—12 կօպէկի վարձով։ Ուրեմն ինչ է ֆոտոգէնի այդչափ թանգանալու պատճառը›։

—

ԱԽԱԼՑԽԱՑՈՒՄ, ինչպէս մեզ գրում են, այժմ կատարեալ ձմեռ է տիրում. սահնակները արդէն չրջում են քաղաքի փողոցները ծածկող փափուկ ձիւնի վրա։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են։ ‹Այս օրերս ձեռնադրվեցան երկու նոր հայ քահանաներ, որոնցից մին Գօրու գաւառի Ռուիս գիւղի, իսկ միւսը նոյն գաւառի Քախվրէլ գիւղի համար։ Նրանցից իւրաքանչիւրը ունենալու է 100-ից աւելի ծուխ։›

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վիլհէլմ կայսրի հիւանդութիւնը, ինչպէս երևում է, աւելի ծանր է, քան թէ կարելի էր կարծել։ Բժշկական ամենախիստ ուշադրութիւն է դարձրած երիտասարդ կայսրի ականջի մէջ առաջ եկած փտումի վրա, և ամենահեղինակաւոր բժիշկների կարծիքով անդամ չէ կարելի սպասել, որ հիւանդութիւնը շուտով անցնի։

—Լեսպս իր յոյսը չէ կորցրել Պանամայի ջրանցքի շինութեան վերաբերութեամբ։ Այս օրերս խօսելով Փարիզի մի քանի լրագրագիտների հետ, նա յայտնեց, որ ինքն շատ ուրախ է, որ գործի վրա քննութիւն է նշանակվում։ Իր խօսակցութեան վերջում Լեսպս այն միտքը յայտնեց, որ Սուէզի ջրանցքի գործը նեղ վիճակի մէջ է եղել, և որ ինքն իր յոյսը դնում է Ֆրանսիայի հեռատեսութեան և Պանամայի ջրանցքի միջազգային նշանակութեան վրա։

—‹Figaro› լրագիրը լսել է, որ մինիստր-նախագահ Ֆլօկէ ասել է, որ Պանամայի ընկերութեան մնանկանալը Ֆրանսիայի համար պատերազմից էլ աւելի վատ կը լինի։ Այդ պատճառով անհրաժեշտ է ընկերութեանը միջոց տալ իր նեղդրութիւնից դուրս գալու համար։

—Լորդ Չերչիլ այս օրերս համայնքների ժողովում դիմեց կառավարութեանը հարցնելով թէ ինչ միջոցներ պէտք է գործ դնվեն Սուէնլիին և Էմին-փաշային ազատելու համար։ Արտաքին գործերի մինիստրը խոստացաւ այդ հարցին պատասխանել երեք օրից յետոյ։

—Բերլինի համալսարանի ռէկտորը ստորագրութիւն է առել համալսարանի ուսանողներից, որով նրանք խօսք են տալիս խոյս տալ մենամարտից։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

‹Արձագանքի› հրատարակիչ պ. Յովհաննիսեան նեղացել է մեզանից։ Շատ ցաւում ենք։ Եւ գիտէք ինչի համար է նեղացել,—նրա համար, որ մենք ‹Արձագանքի› առիթով երբեմն երբեմն մեր գրած նկատողութիւնները լոյս չենք հանում երեքշաբթի կամ հինգշաբթի օրերը, որպէս զի շաբաթաթերթի ուժասպառ գրողները ժամանակ ունենան աւելի շուտ պատասխանելու։ Զարմանալի միամիտ է ձևանում պ. հրատարակիչը. նա չէ ուզում հասկանալ, որ եթէ մենք

տութեան օգուտը, բայց կարելի չէ այդ թւերի վրա յոյս դնել, քանի որ դրանք ճշգրութեամբ հաւաքված չեն։ Երկրորդ՝ ծաղկահատութեան հակառակորդները աշխատում են համոզել, իբր թէ ծաղկահատութիւնը մանուկների առողջութեան վրա շատ անգամ վատ ներգործութիւն է ունենում, իբր թէ մանուկներից շատերը կարմիր քամի հիւանդութեամբ վարակվելով մեռնում են, և վերջապէս իբր թէ ոչ մի մանուկ ապահովված չէ ծաղկահատութեան միջոցին միւս ամենավարակիչ սիֆիլիս հիւանդութեամբ վարակվելու։

Ցիրաւի որ մինչև վերջին ժամանակներս ծաղկահատութեան վիճակագրական տեղեկութիւնները, մի քանի բացառութեամբ, թոյլ էին։ Այդ վիճակագրական տեղեկութիւնների գլխաւոր թերութիւնը այն է, որ թէ պատուաստված և թէ չը պատուաստված հիւանդացողների և մեռնողների թւերի վրա ուշադրութիւն չէր դարձրած, թէ որքան պատուաստածներ և չը պատուաստվածներ կան մի որ և է հասարակութեան մէջ։ Ի հարկէ, ծաղկահատութեան օգուտը այն ժամանակ միայն կարելի կը լինի հաստատել, երբ կերևայ որ ծաղկի համաճարակումի ժամանակ հիւանդութեան կամ մահի դէպքերը չը պատուաստվածների մէջ աւելի են, քան թէ պատուաստվածների մէջ։

Վիճակագրութիւնը առաջ մի պակասութիւն ևս ունէր, այն է պատուաստված բառի միտքը ոչ մի տեղ իսկապէս չէր որոշվում. սովորաբար այդ բաժնի մէջ մտնում էին ամենքը, ում մի ժամանակ պատուաստված է եղել ծաղիկը, ուշադրութիւն չը դարձնելով, թէ արդեօք ծաղկահատութիւնը աջող էր կատարված թէ ոչ, և թէ ինչքան միջոց է անցել պատուաստելու օրից։ Այդ բառի միտքը անորոշ և չփոթ լինելով, ի հարկէ, որ և վիճակագրական ցուցակների մէջ պատուաստվածների կարգում գտնվում էին և այնպիսիները, որոնք անաջող կարող էին պատուաստված լինել և կամ այնքան երկար միջոց էր անցել ծաղկահատութեան օրից, որ նրա պաշտպանողական զօրութիւնը անցել էր և ուրեմն այդ հանգամանքներում դրանք չը պատուաստվածների կարգում պիտի համարվեն։ Այժմ ծաղկահատութեան կաղմակերպութեան վրա նըմանապէս և պատուաստվածների վիճակագրական տեղեկութիւնների վրա առանձին ուշադրութիւն է դարձրած և արդէն ունենք կանոնաւոր կերպով հաւաքված վիճակագրական տեղեկութիւններ, որոնք հաստատում են ծաղկահատութեան և կրկնածաղկահատութեան անհրաժեշտութիւնը։ Տեղի սղութեան պատճառով շատ օրինակներ մենք այստեղ չէինք կարող բերել։ Կը սահմանափակենք մի քանի օրինակներով։ Դոկտոր Կօրօզի հիմնվելով պաշտօնական թւերի վրա ասում է, որ հիւանդանոցներում բոլոր հիւանդութիւններից առաջացած մահերը, ծաղկից պատուաստվածներից ութ ու կէս տոկոսի է հասնում, իսկ չը պատուաստվածներից՝ տասներկու տոկոսի։ Բացի այդ, դոկտոր Կօրօզին հաստատում է, որ բնական ծաղկի համաճարակումի ժամանակ պատուաստվածներից շատ քչերն են վարակվում, իսկ չը պատուաստվածներից հիւանդանում է մօտ 45% և մահուան դէպքերը այդ կարգին պատկանողների մէջ 12 անգամ աւելի են լինում։

Խեմնից քաղաքում դոկտոր Ֆլինցերի հետազօտութիւնից երևաց, որ ծաղկի համաճարակումի ժամանակ չը պատուաստվածներից աւելի էին հիւանդանում ծաղկով և մեռնում, իսկ պատուաստվածներից հիւանդանում էին մի աննշան մասը, այն էլ շատ թեթև ծաղկով։

Վերջապէս ճիշդ վիճակագրական տեղեկութիւններին նայելով, հաստատվում է, որ ծաղկի համաճարակումի ժամանակ չը պատուաստվածները աւելի են վարակվում և մեռնում, քան թէ պատուաստվածները։

—

Ուրեմն այս բոլոր մեր ասածներից պիտի հետևեալ համառօտ եզրակացութիւններ անենք։

1) Դեռ հին ազգերին էր յայտնի ծաղկահատութեան գործածութիւնը։ Նրանք համոզված լինելով թէ ամեն մարդ անշուշտ վարակվելու է մի անգամ իր կեանքի մէջ բնական ծաղկով, թեթև բնական ծաղկի ափշով էին պատուաստում իրանց երեխաներին և իբր թէ դրանով ազատում էին նրանց ապագայ սաստիկ վարակումից։

2) Պատահմամբ կովի ծաղկից վարակվելուց առաջացած դէպքերը պատճառ դարձան կովի ծաղկի ափշով ծաղկահատութեան տարածվելուն։

3) Բնական, մինչև անգամ թեթև ծաղկի հիւթով պատուաստումը երկիւղալի է և աններելի։

4) Ծաղկահատութեան համար պիտի գործածել անպայման կովի ծաղկի ափշը, և կամ այդ ափշով պատուաստված առողջ երեխաների ծաղկի ափշը։

5) Կովի ծաղկի նախապաշտպանողական զօրութիւնը հետզհետէ թուլանալու պատճառով անհրաժեշտ է կրկին պատուաստել տալ ծաղիկը, առաջին պատուաստումից ոչ աւելի քան 8 կամ 10 տարի անցնելուց յետոյ։

6) Եթէ պատուաստված մարդիկ բնական ծաղկով են վարակվում, հիւանդութեան ընթացքը լինում է թոյլ և աներկիւղ։

7) Կովի ծաղկի ափշով կատարված ծաղկահատութիւնը, համարեա առանց բացառութեան, վատ հետևանքներ չէ տալիս։

8) Ծաղկի համաճարակումի ժամանակ, անհրաժեշտ է ծաղիկ պատուաստել թէ փոքրերին և թէ մեծերին, որոնց առաջին ծաղկահատութիւնից անցել է 8 տարի, և

9) Ծաղկահատութեան կարևորութիւնը ժողովրդի մէջ տարածել անհրաժեշտ է։

Բժշկապետ Տէր-Գրիգորեանց (Թիֆլիսեցի)

«Արձագանքի» ասածների առիթով մի քանի խօսք ենք գրում, այդ գրում ենք միմիայն հասարակութեան համար, և բոլորովին էլ չենք հետաքրքրվում այն բանով, թէ արդեօք «Արձագանքը» ժամանակ պիտի ունենայ շուտով մեզ պատասխանելու, թէ ոչ։ Հաւատացէք, պարոններ, որ եթէ «Արձագանքի» դատարկութիւնները մեզ հետաքրքրէին, մենք չաբաթաթերթի համարները շուտով կը թերթէինք, և ոչ թէ օրեր և շաբաթ անցնելուց յետոյ, և շուտով էլ կը պատասխանէինք։ Բայց միթէ մենք ենք մեղաւոր, որ «Արձագանքի» դատարկութիւնը մեզ չէ հետաքրքրում։ Խնդրը գլխին բան դրեցէք, և հաւատացէք որ իսկոյն կը կարդանք, և իսկոյն էլ կը պատասխանենք, եթէ պատասխանելու կարիք կը լինի։ Եւ վերջապէս ինչ ապերախտ մարդ է եղել պ. Յովհաննիսեան, բաւական չէ որ «Մշակը» այսքան նիւթ է մատակարարում «Արձագանքին», նա ուզում է, որ մենք մի շաբաթ առաջ յայտնենք նրան, թէ՝ «Մշակի» մէջ այս կամ այն բան պիտի լինի, ուրեմն պատրաստ եղէք հայհոյելու և խեղկատակութիւններ անելու.... Ցաւում ենք, որ այդ չենք կարող անել. խոստացել ենք նիւթ մատակարել և անխախտ կերպով կը կատարենք մեր խոստումը։

* * *

Ընթերցողը յիշում է, որ մենք այս ամառը մի բանասիրականում, խօսելով լեզուի մասին, աշխատել ենք ապացուցանել տգէտ հրապարակախօսներին, որ մամուլը ամենևին չէ աղաւաղում լեզուն։ Այժմ հետաքրքիր է նոյն հարցի մասին Ֆրանսիացի նշանաւոր գրող Էմիլ Զոլայի հեղինակաւոր կարծիքը լսել։ Հինգ ասես հայհոյանքներ չեն թափվում մամուլի վրա, իրաւացի կերպով բացականչում է Զոլա,—մամուլը իբր թէ ծծում է երիտասարդութիւնից նրա բոլոր ոյժերը, խլում է լուրջ գրականութիւնից ընդունակ աշխատաւորներին, զրկում է թատրոնը և բոմանը իրանց գործիչներից, և վերջապէս լրագրութեան մէջ պարապողներին իբր թէ զրկում է ընդունակութիւնից որ և է լուրջ աշխատանք կատարելու։ Ինձ հարցնում են՝ արդեօք ինչ կարծիք ունեմ ես այդ բոլոր մեղադրանքների մասին. ես պատասխանում եմ, որ ես վճռողապէս համարում եմ ինձ մամուլի կողմնակից։ Ամեն անգամ երբ մի որ և է դաւառացի երիտասարդ դիմում է ինձ խորհրդի համար, ես նրան միշտ առաջարկում եմ լրագրական գործով պարապելու։ Մամուլը ամենալաւ դպրոցն է իսկական կոչում ունեցող գրողի համար։ Թոյլերը այդ ասպարիզում, ճշմարիտ է, կը կորչեն, ինչպէս սակայն կը կորչեն և որ և է այլ գործունէութեան մէջ, բայց ուրիշ կողմից զօրեղները մամուլի մէջ կը քաղեն իրանց համար մի նոր զօրութիւն։ Ես աւելի հեռու եմ գնում մինչև անգամ, և պնդում եմ, որ գրողի ոճն էլ աւելի վարժ կամ կատարեալ է դառնում լրագրական ամենօրեայ աշխատանքի մէջ։ Մեզ հաւատացնում են, որ լրագրի յօդուածները և նկատողութիւնները, որոնք գրվում են չտապով, մի կտոր թղթի վրա, գրասեղանի ծայրում, իբր թէ փչացնում են ոճը, դարձնում են նրան անփոյթ, իսկ ես, ընդհակառակն, կարծում եմ, որ լրագրական աշխատանքը հարստացնում է ոճը, տալիս է նրան աւելի ոյժ և ճշգրտութիւն։ Հմուտ կամ փորձված հրապարակախօսի համար գրեթէ ամենևին չէ պատահում որոնել ասացուածները և բառերը, նա կարիք չունի երկար մտածելու ոճի պարբերութեան տվորական դասաւորութիւնների վրա։ Նա գրում է նոյնքան ազատ և հեշտ կերպով, որչափ ոմանք խօսում են, կատարելապէս տիրապետելով իր մտքին և խօսքին»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 դեկտեմբերի։ «Русское Судоходство» շաբաթաթերթը գալ տարվայ համար ընդարձակելով պատմական և ծովային ճանապարհորդութիւնների բաժինը, ձեռնարկել է ֆինանսների մինիստրութեան արխիվում եղած հետաքրքիր դօկումենտների մշակութեան գործին։

ՓԱՐԻԶ, 9 դեկտեմբերի։ Անցեալ գիշեր ոստիկանական չինութեան առաջ դինամիտային պայթիւն տեղի ունեցաւ, որի պատճառով չինութեան առաջին կողմը աւերվեց։ Մարդկանց հետ դժբաղդութիւն չէ պատահել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 դեկտեմբերի։ «Биржевыя Вѣдомости» լրագրի հատով ծախելը նորից թոյլ է տրված։ Ներքին գործերի մինիստրութիւնը, նահանգապետներին ուղղած շրջաբերականով, առաջարկում է կարգադրել, որպէս զի սրանից յետոյ թոյլ չը տրվի անատուների ժանտախտը պատուաստել, իսկ ուրիշ տարափոխիկ հիւանդութիւնների պատուաստելը կարող է տեղի ունենալ միայն բժշկական դեպարտամենտի թոյլտուութեամբ և տեղական բժշկական տեսչութեան «անասնաբուժական-ոստիկանական» խիստ հսկողութեան ներքոյ։

ԼՕՆԴՕՆ, 10 դեկտեմբերի։ Համայնքների ժողովին յայտնված է, որ Էմին փաշայ և Ստէնլի հասան Արուվիմի, որը գտնվում է կոնգոյի պետութեան մէջ։

ԲԱԹՈՒՄ, 11 դեկտեմբերի։ Դուման վճռեց մերժել Բօաշիլդին անցկացնելու երկու խողովակ՝ նաւթավագոնների նաւթակիր չոգենաւերը տեղափոխելու համար, այն պայմաններով, ինչ պայմաններ եղել են Նոբէլի, Շիբաևի և ուրիշների հետ. պատճառաբանելով այդ մերժումը նրանով, որ ածուի սիստեման այնպիսի ծախքեր է պահանջում, որ մանր գործարանատէրերը այժ չեն ունենայ մրցելու։ Վերջինների սինդիկատը միջնորդութիւն է անելու, որպէս զի կատարելապէս արգելվի նաւթի ածուի կերպով տեղափոխվելը, և կամ գոնէ, ածուի կերպով ուղարկվող նաւթի վրա մաքս դրվի, որով կարելի կը լինի հաւասարակշռել գները շուկայում։

ՀՌՕՄ, 12 դեկտեմբերի։ Ֆինանսների մինիստր Մալիանի հրաժարական տուեց։

ՎԻԵՆՆԱ, 12 դեկտեմբերի։ Այստեղ ենթադրում են, որ Աւստրո-Ունգարիան չի խառնվի Սերբիայի գործերում և ապատում են, որ Միլանը գահից կը հրաժարվի և նրա որդի Ալէքսանդր թագաւոր կը հրատարակվի։ Ունգարական ընդդիմադրական լրագիրները դժգոհութեամբ յայտարարում են, որ իբր թէ Միլանը տալիս է սերբիական քաղաքականութեանը Ռուսաստանի նպատակներին կատարելապէս համապատասխանող ուղղութիւն։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Դեկտեմբերի 9-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	97	ր. —	›
Համբուրգի վրա 100 մարկ — . .	47	› 55	›
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	38	› 15	›
Ոսկի — արժէ — . .	7	› 80	›
Մաքսային կուպօններ — . .	156	› —	›
Արծաթ — — — . . .	1	› 18	›
Բօրսային դիսկօնտներ — . .	$6^7/_8$ և $7^3/_4$%		
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	98	› —	›
— — — — 2-րդ —	97	› 75	›
— — — — 3-րդ —	97	› 50	›
— — — — 4-րդ —	97	› 50	›
— — — — 5-րդ —	97	› 50	›
— — — — 6-րդ —	—	› —	›
Նոր 4% փոխառութիւն.	82	› —	›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	97	› 87	›
— — 2-րդ —	98	› —	›
— — 3-րդ —	97	› 50	›
Ներքին 5% առաջին փոխառութ.	272	› 50	›
— երկրորդ —	245	› 50	›
$5^1/_2$% բէնտա	102	› 25	›
Ոսկեայ բէնտա.	175	› 50	›
Եօթերորդ կօնսօլիդած փոխառութիւն.	149	› 50	›
Նոր երկաթուղային բէնտա . . .	97	› 75	›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	—	› —	›
— — թղթադ. .	91	› 37	›
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .	98	› —	›
$5^1/_2$% գրաւական թղթեր Խերսոնի կալուած բանկի.	97	› 25	›
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	99	› 75	›
— — Պոլտավայի — —	100	› 50	›
— — Պետ. Տուլսկ. — —	99	› 75	›
— — Կիևի — —	100	› 50	›
— — Մոսկվայի — —	101	› —	›
— — Բեսարաբ. Տավր. —	99	› 75	›
— — Նիժ. Սամար. —	100	› —	›
— — Վիլնայի —	99	› 25	›
— — Թիֆլիսի—72 և — տ.	97	› —	›
— —Քութայիսի-18 և — տ.	97	› —	›
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները	700	› —	›
Ռուսաց երկաթուղիների դվիս. ընկ.	239	› 50	›
Բիբինսկ-Բոլոգովի ընկ.	84	› 25	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	92	› 62	›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	91	› 75	›
Օդէսայի — — .	92	› 62	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	81	› —	›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը շատ ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ВЪ ЖИРАРДОВСКОМЪ СКЛАДѢ

Тифлисъ, Дворцовая ул., КАРАВАНСАРАЙ БЫВШІЙ АРЦРУНИ.

Դվորցովայա փողոց ՆԱԽԿԻՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ քարավանսարայում

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՊԱՀԵՍՏ

Ցղամարդկանց և կանանց ձերմակեղէն։

Սպիտակեղէնն օժիտի համար 100 բուբլուց մինչև 5,000 բուբլի գնով պատրաստ է միշտ մեր մագազինում։

Իսկ 5,000 բուբլուց մինչև 10,000 բուբլու գնով սպիտակեղէնն օժիտի համար պատուէր ենք ընդունում, որը և կատարում ենք շուտ և ճիշդ կերպով։

5—10. ԴՕՆՆԷՐ և ԼԷՑՏՑ

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ԱԲԻՍՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԳԻՐՔ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 բուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է։

Միանուագ քսանից աւելի գնողին զիջումն կը լինի։

Վաճառվում է ԲԱՑԱՌԱՊԷՍ Խիդիկելի և ընկ. գրավաճառանոցում, Թիֆլիս, Գօլօվինսկի Պրոսպէկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ։ 23—40



ՕՊՏԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Մ. Գ. ՑԷՑՏԼԻՆԻ

ժամացոյցների մագազինում։ Պալատի այգու դիմաց, անկիւնի մագազինը։

Ամեն տեսակ ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԷՆՍՆԷ, ԼՕՐՆԷՏՆԵՐ և ԶԵՐՄԱՁԱՓԵՐ

Տրվում են ճշգրտութեամբ պ.պ. բժիշկների կարգադրութեան համեմատ, նոր մեթոդական և նախկին դիւցազնական սիստեմայով։

Կարկատվում են ակնոցները և նոր ապակիներ են դրվում։

ԳՆԵՐԸ ԱՄԵՆԱՁԱՓԱՒՈՐ ԵՆ։ 2—6 (Ե)

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ, ՄՐԳԱՑԻՆ ԵՒ ԳԱԶԱՑԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Ցէրկօվնայա փողոցում, կոնստանտինօվի տան կից, որտեղ գտնվում է Լօբկո և ընկ. տպարանը)

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը, որ ես նորից վերա նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱ ՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ։

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՑԻԱՑԻ մի ՊՐՕՎԻԶՈՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում։ Գործարանն ունի ամենանոր ձևի մեքենաներ, նոյնպէս և ՉԻՎԻՆԻ հռչակաւոր ՖԻԼՏՐը, որը միակ է, որ աջողութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, մինեռալական մասնիկներից ու աղերից և զերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ։

Պրօվիզօրը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում։ Շնորհով այն օժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիական քիմիայի ճիւղում, այսուհետև իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զելտէրեան, մրգային և գազային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՐԵՐը, ինչպէս օրինակ՝ Վիշիի, Էմսի, Կարլսբադի, Մարիէնբադի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետևելով յայտնի հետազօտողների տուած կանոններին։ Արուեստական մինեռալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հռչակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ածխաթթու գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա։

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ։

Տարաձայնութիւններից խուսափելու համար, խնդարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողներին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի ն շ ա ն ա կ ը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը։

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 46—50 (Ե)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԿԸ

„THE NEW ORIENTAL BANK CORPORATION LIMITED", որը աշխարհիս ամեն մասերում ունի բաժիններ, այժմ բաց է արել իր գործունէութիւնը ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ, որտեղի կենտրոնական բաժինը, որը գտնվում է ԹԷՀՐԱՆՈՒՄ, կատարում է ամեն տեսակ բանկային օպէրացիաներ։

Ցիշեալ բանկի ագէնտը Կովկասում

6—10 ԲՈՒՐԳՀԱՐՏ և ԸՆԿ.

Дозволено цензурою, Тифлисъ 12 Декабря 1888 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.